

ԻՆՏԵՆՍԻՎ ԹԵՐԱՊԻԱՅՈՒՄ ՑԱՎԱԶՐԿՄԱՆ, ՍԵՂԱՑԻԱՅԻ և ԴԵԼԻՐԻՈՒՄԻ ՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Ներածություն

Ուղեցույցի նպատակն է բարելավել ցավի, սեղացիայի և դելիրիումի վերահսկումը ինտենսիվ թերապիայի բաժանմունքի (ԻԹԲ) բոլոր տարիքային խմբերի պացիենտների շրջանում:

Մեթոդներ

Սույն Ուղեցույցը մշակվել է Անէսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միության անդամների կողմից: Փաստաթղթի հիմքն է հանդիսացել 2010 թվականին 12 գերմանական բժշկական ընկերությունների կողմից հրապարակած Անզգայացման, սեղացիայի և դելիրիումի վարման ապացուցողական և համաձայնության վրա հիմնված ուղեցույցի 2015 թվականի վերանայումը (Evidence and consensus based guideline for the management of delirium, analgesia, and sedation in intensive care medicine. Revision 2015): Այս փաստաթղթում ապացույցների որակը գնահատելիս կիրառվել է Օքսֆորդի Ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների դասակարգումը: Խորհուրդների ուժը բնորոշող աստիճաններն էն՝ A = ուժեղ խորհուրդ (մենք խորհուրդ ենք տալիս/պետք է), B = խորհուրդ (մենք առաջարկում ենք) և O = բաց խորհուրդ (կարելի է դիտարկել): Արդյունքում ստեղծվեց համապարփակ, միջմասնագիտական, ապացուցողական և համաձայնության վրա հիմնված S3-րդ մակարդակի ուղեցույց: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման բացակայության վերաբերյալ տեղեկատվությունը: Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Անէսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միության կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցի ծածկույթը ներգրավում է ԻԹԲ-ի բոլոր տարիքային խմբի պացիենտներին ներառյալ հղիներին և կրծքով կերակրող մայրերին: Ուղեցույցը նախատեսված է անէսթեզիոլոգների, ինտենսիվ թերապևտների, վիրաբույժների, նյրադաբանների, նյարդավիրաբույժների, ԻԹԲ-ի բուժքույրական անձնակազմի և առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Արդյունքներ

Ցավի, սեղացիայի և դելիրիումի վերաբերյալ ձևակերպել են 145 խորհուրդ, որոնք լուսաբանում են այնպիսի ասպարեզներ ինչպիսիք են՝ ԻԹԲ-ի մեծահասակ և մանկաբուժական պացիենտների շրջանում դելիրիումի առաջացման ռիսկի գործոնները և նրանց կանախարգելումը, ցավի, դելիրիումի, քնի և սեղացիայի մոնիթորինգը և բազմամոդալ վարման սկզբունքները: Առանձին քննարկվել է ցավազրկման, սեղացիայի և դելիրիումի բուժումը հատուկ դեպքերում՝ հղիները և կրծքով կերակրող կանանց, ծանր այրվածքների, բազմաթիվ վնասվածքներով և ներզանգային հիպերտենզիայով պացիենտների շրջանում:

Հետևություններ

Ուղեցույցը օգնություն է հանդիսանում է ինտենսիվ թերապիայում դելիրիումի, լարվածության և տագնապի կանխարգելման, ախտորոշման և բուժման ինչպես նաև ցավազրկման, սեդացիայի և քնի կառավարման ապացուցողական մոտեցումների ընտրության հարցերում:

Բանալի բառեր

Ապացուցողական բժշկություն, ուղեցույցներ, ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, ցավազրկում, սեդացիա, դելիրիում, տագնապ, սթրես, քուն, գնահատման սանդղակ, բենզոդիազեպիններ, ալֆա-2 ազոնիստներ, ինտենսիվ թերապիայի բաժանմունք, պալիատիվ խնամք

Պատասխանատու համակարգող

Մանգոյան Հ.Ն., բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական կրթության ֆակուլտետի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի դոցենտ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի գլխավոր ղեկավար:

Աշխատանքային խմբի անդամներ

- Գնունի Ա.Ս. ՀՀ ԱՆ գլխավոր անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, «Նաիրի» բժշկական կենտրոնի գործադիր տնօրեն
- Գաբրիելյան Լ.Մ., բ.գ.թ., «Էրեբունի» բժշկական կենտրոնի անզգայացման բաժանմունքի վարիչ, Երևան քաղաքի գլխավոր անեսթեզիոլոգ
- Ղազարյան Ա.Ա. բ.գ.թ., «Արմենիա» բժշկական կենտրոնի անզգայացման և վերակենդանացման ծառայության ղեկավար
- Կալենտերյան Հ.Զ., ՀՀ ԱՆ գլխավոր մանկական ռեանիմատոլոգ, Մուրացան ՀՀ-ի Մանկական և նորածնային վերակենդանացման կլինիկայի ղեկավար
- Մովսիսյան Ն Տ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի դասախոս, ցավի կառավարման և պալիատիվ խնամքի մասնագետ, Ցավերի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի «ՑՈՒՀԱ» նախագահ

- Քոչարյան Հ. Հ., Մ.Հերացու անվան ԵՊԲՀ Քույրական գործի կազմակերպում ամբիոնի դասախոս, Էրեբունի ԲԿ Բուժքույրերի ներհիվանդանոցային շարունակական կրթության հանձնախմբի ղեկավար, ՀՀ ԿԳՆ Երևանի հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ, անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի դասախոս

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու կարգավորողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարում են իրենց շահերի բախման բացակայության մասին: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կառույցը չի ունեցել և ոչ մի ազդեցություն սույն ուղեցույցի մշակման որևէ փուլի վրա:

Շնորհակալական խոսք

Պատասխանատու կարգավորողը իր երախտագիտությունն է հայտնում սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին...

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում: Խորհուրդների մեծամասնությունը կիրառելի է ինչպես ԻԹԲ-ում գտնվող, այնպես էլ ոչ ԻԹԲ-ում հոսպիտալացված պացիենտների համար:

Բովանդակություն

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Մեծահասակների ինտենսիվ թերապիայում դելիրիումի, ցավազրկման և սեդացիայի կառավարումը

ԻԹԲ ասոցացված դելիրիումի ռիսկը և կանխարգելումը

Ցավազրկման, սեդացիայի, դելիրիումի, տագնապի և քնի վերահսկում

Բուժման սկզբունքներ

Ոչ-դեղորայքային սկզբունքներ

Ցավագրկում

Սեդացիա

Չափավոր կամ խորը սեդացիա

Ախտանշան-ուղղորդված սեդատիվ թերապիա

Դելիրիումի դեղորայքային բուժում

Մեխանիկական օդափոխումից անջատում

Բուժում նյարդամկանային պաշարման դեղորայքով (ՆՄՊԴ)

Ներ- և միջհիվանդանոցային տեղափոխում

Ցավագրկումը, սեդացիան և դելիրիումի վարումը հատուկ դեպքերում

Հղիները և կրծքով կերակրող կանայք ԻԹԲ-ում

Կյանքի ավարտի խնամք

Ծանր այրվածքներով հիվանդներ

Բազմաթիվ վնասվածքներով հիվանդներ

Ներգանգային հիպերտենզիայով հիվանդներ

Սրտային վիրահատություն

Արտամարմնային կենսապահովմամբ (ECLS) հիվանդներ

Հիվանդների հատուկ դիրքավորում

Ցավագրկման, սեդացիայի և դելիրիումի վարումը երեխաների շրջանում

Վերահսկում

Երեխաների բուժական ռազմավարությունները

Ցավագրկման, սեդացիա և դելիրիումի վարումը տարեցների շրջանում

Ուղեցույցի ներդրման հանրավորությունները, որակի ապահովումը և աուդիտի ցուցանիշները

Հավելված 1. Օքսֆորդի Ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների դասակարգում

Հավելված 2. Գնահատման սանդղակներ

Հապավումներ

ԱՎ՝ ապացույցների որակ

ԽԱ՝ խորհուրդների աստիճան

ԳՍ՝ Գլազգոյի սանդղակ

ՀԻԹՀ՝ հետ-ինտենսիվ-թերապիայի-բաժանմունքի-համախտանիշ
ՀՎՍԽ՝ հետվնասվածքային սթրեսային խանգարում
ՁՃ՝ զարկերակային ճնշում
ՍԿՀ՝ սրտի կծկումների հաճախականություն
ԻԹԲ՝ ինտենսիվ թերապիայի բաժանմունք
ԿԵԿ՝ կենտրոնական երակային կաթետր
ՆՄԴՊ՝ նյարդամկանային պաշարման դեղորայք
ՀՇ՝ համակարգչային շերտագրություն
ՆԳՃ՝ ներգանգային ճնշում
ՆԳՀ՝ ներգանգային հիպերտենզիա
ՈՍՀԲԴ՝ ոչ ստերոիդային հակաբորբոքիչ դեղորայք
ՊԲՎՓ՝ պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում
ԹԱՕ՝ թոքերի արհեստական օդափոխություն
BPS (Behavioral Pain Scale)՝ ցավի գնահատման վարքագծային սանդղակ
CAM-ICU (Confusion Assessment Method in ICU)՝ ինտենսիվ թերապիայի բաժանմունքում դելիրիումի և ապակողմնորոշման գնահատման մեթոդ
CPOT (Critical Care Pain Observation Tool)՝ ինտենսիվ թերապիայում ցավի գնահատման գործիք
FPS-R (Faces Pain Scale, revised)՝ դեմքի վերանայված ցավային սանդղակ
ICDSC (Intensive Care Delirium Screening Checklist)՝ ինտենսիվ թերապիայում դելիրիումի մշտադիտարկման ստուգաթերթիկ
PaO₂՝ թթվածնի պարզիալ ճնշումը զարկերակային արյան մեջ
SAT (Spontaneous Awakening Trial)՝ սեղացիայի օրական ընդմիջումներ
SatO₂ (oxygen saturation)՝ զարկերակային արյան հագեցվածությունը թթվածնով
SBT (Spontaneous Breathing Trial)՝ ինքնուրույն շնչառության փորձ
RASS (Richmond Sedation Agitation Scale)՝ Ռիչմոնդի սեղացիայի և աժիտացիայի սանդղակ

Ինտենսիվ թերապիայի բաժանմունքի (ԻԹԲ) պացիենտները իրենց կյանքի և առօրյայան փրկմանն ուղղված բուժման շրջանակներում անխուսափելիորեն ենթարկվում են բազմաթիվ միջամտությունների, որոնց ճնշող մեծամասնությունը՝ շնչափողի ինտուբացիան, թոքերի արհեստական օդափոխությունը (ԹԱՕ), կենտրոնական երակների կաթետրիզացիան և այլ, կրում է խիստ ազդեցիվ բնույթ և հղի է ցավի, տազնապի, գրգռվածության/աժիտացիայի և խորը ապրումների առաջացմամբ: Հատկանշական է, որ չնայած վերջին տարիների տեխնոլոգիական և տեսական առջընթացներին, պացիենտների ամենա տարածված հիշողությունը ԻԹԲ-ում իրենց անց կացրած օրերի վերաբերյալ դա ցավն է: Ապացուցված է ցավից դրդված սթրես պատասխանի անբարենպաստ ազդեցությունը ԻԹԲ-ի պացիենտների շրջանում՝ շրջանառող կատեխոլամինները առաջացնում են զարկերկանների կրճատում, հոյսվածքների պերֆուզիայի խանգարում և հոյսվածքներում թթվածնի պարցիալ ճնշման նվազում, հիպերմետաբոլիկ վիճակ և իմուն համակարգի ընկճում: Հատկանշական է, որ ԻԹԲ-ի պացիենտները վերապրում են ոչ միայն միջամտությունների հետ կապված ցավ, այլ նաև հանգիստ պայմաններում և անձնակազմի կողմից իրականացվող պլանային խնամքի միջոցառումների ժամանակ:

Ծանր հիվանդությամբ տառապող օրգանիզմի հարմարողական ֆունկցիաների համար մեկ այլ մարտահրավեր է հանդիսանում ԻԹԲ-ի միջավայրի գործոնները՝ լուսային և ձայնային անկառավարելի ռեժիմները, անձանոթ անձնակազմը, մտերիմների շփման սահմանափակումները և այլ: Խնդիրը բարդանում է նաև այն հանգամանքով, որ պացիենտներին առանց ցավի, տազնապի կամ դելիրիումի շարունակական պահելու խնդիրը հաճախակի հակասության մեջ է մտնում ինտենսիվ թերապիայի կլինիկական այլ նպատակների հասնելու հետ, օրինակ՝ սիրտ-անոթային և շնչառական համակարգերի կայունության ապահովելու: Ցավի, աժիտացիայի և դելիրիումը վերահսկումը ԻԹԲ-ում խնդրահարույց է նաև այն պատճառով, որ պացիենտները հաճախ իվիճակի չէն լիարժեք հաղորդել իրենց զգացողություններն ու գանգատները իսկ որժանձնակազմը չի կիրառում այս ախտանշանների գնահատման օբյեկտիվ և վերարտադրվող գործիքներ: Վերջապես, տարբեր երկրների, առողջապահական համակարգերի և նույնիսկ միևնույն համակարգին պատկանող բուժհաստատությունների միջև գոյություն ունեցող մշակույթային, գործառնական և ռեսուրսների տարբերությունները խիստ դժվարեցնում են ցավի, դելիրիումի և աժիտացիայի կառավարման միասնական ապացուցողական մոտեցումների ներդրումը:

Անզգայացման պրակտիկայի հիմքում ընկած է ցավազրկող դեղորայքի, հիպնոտիկների և մկանային ռելաքսանտների հայտնի “եռյակի” ներդաշնակ ֆարամակոդինամիկ փոխազդեցությունները: Նմանատիպ միասնական մոտեցումը թույլ է տալիս ապահովել

անզգայացման հիմնական նպատակները միառժամանակ կիրառելով յուրաքանչյուր դեղորայքի նվազագույն դեղաչափեր: Ցավի, դելիրիումի և աժիտացիայի կառավարումը ԻԹԲ-ում իրենից ներկայացնում է նմանատիպ մոդել, որտեղ բոլոր օղակները խիստ կապակցված են և պահանջում են միասնական մոտեցում: Այս ախտանշանների վաղ վարումը լավացնում է վերականգնումը և երկարատև ելքը նվազեցնելով հետ-ինտենսիվ-թերապիայի-բաժանմունքի-համախտանիշը (<ԻԹԸ) և մահացությունը: Հիմնական սկզբունքը հետևյալն է՝ «վաղ նպատակաուղղված թերապիա» բուժման ապացուցողական թիրախներով, կլինիկական վիճակի գնահատում վաղից/հաստատված գործիքներով և նպատակաուղղված դեղորայքային թերապիա: Այս միջոցները պետք է ուղեկցվեն կանխարգելմանը և բուժմանն ուղղված ոչ-դեղորայքային միջամտություններով: Սեդատիվ և ցավազրկող դեղորայքի օգտագործումը ի շահ պացիենտների պետք է կրի մտածված և հավասարակշռված բնույթ:

Ամփոփելով այս ասպարեզի վերջին երկու տասնամյակների գիտագործնական փորձը կարելի է ձևակերպել, որ ԻԹԲ-ի պացիենտը պետք է լինի արթուն և զգոն, առանց ցավի, տագնապի կամ դելիրիումի: Միևնույն ժամանակ նա պետք ունենա ֆիզիկական և կոգնիտիվ ռեսուրսների վերականգնման բավարար պայմաններ՝ տարածքային, լուսային և ձայնային ռեժիմների, կոմունիկացիոն և այլ: Ի վերջո, այս պայմաններն են, որ թույլ են տալիս պացիենտին ակտիվ մասնակցել իր բուժմանը բարձրացնելով վերջինիս արդյունավետությունը:

Հայաստանի բժշկական օգնություն տրամադրող հաստատությունների ԻԹԲ-ում ցավի, ցավազրկման, սեդացիայի և դելիրիումի կառավարումը գտնվում է խիստ անբավարար մակարդակում՝ պլանային կարգով չէն կիրառվում ռիսկի խմբերի նույնականացումը և չեն կիրառվում գնահատման գործիքները, գերակշռում է սեդատիվ դեղորայքի օգտագործումը ի համեմատ ցավազրկողների, բացակայում են համապատասխան տեղային գործելակարգերը և/կամ ընթացակարգերը, թերագնահատվում է ցավազրկման բազմամոդալ մարտավարությունը և այլ: Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը և խնդրի արդիականությունը Անէսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միությունը որոշեց մշակել այս ուղեցույցը:

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն Ուղեցույցը մշակվել է Անէսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միության անդամների կողմից: Կատարվել է բազմաբնագավառ, համակարգված գրականության որոնում MEDLINE/PubMed/UptoDate/National Clearinghouse առցանց

տվյալների բազաներում (2007-2016թթ.) բանալի բառերի օգնությամբ հավելյալ կատարելով համապատասխան հրապարակումների գրականության ցանկերի սկրինինգ: Յուրաքանչյուր որոնողական ռազմավարության նպատակն էր հայտնաբերել պատահական բաշխմամբ վերահսկավող փորձարկումներ (ՊԲՎՓ), ոչ-ՊԲՎԹ և համակարգային վերանայումներ, որոնք անդրադառնում են տվյալ թեմային վերաբերվող որոշակի գիտական հարցադրումներին:

Փաստաթղթի հիմքն է հանդիսացել 2010 թվականին 12 գերմանական բժշկական ընկերությունների կողմից հրապարակած Ցավագրկման, սեդացիայի և դելիրիումի վարման ապացույցների և համաձայնության վրա հիմնված ուղեցույցի 2015 թվականի վերանայումը (Evidence and consensus based guideline for the management of delirium, analgesia, and sedation in intensive care medicine. Revision 2015) [1]: Գերմանիայի անզգայացման և ինտենսիվ թերապիայի միության (German Society of Anesthesiology and Intensive Care Medicine, DGAI) և Գերմանիայի ինտենսիվ թերապիայի և անհետաձգելի բուժօգնության միջմասնագիտական միավորման (German Interdisciplinary Association for Intensive Care and Emergency Medicine, DIVI)-ի ղեկավարությամբ հեղինակած, սա աշխարհում առկա ամենամանրամասն ուղեցույցներից մեկն է՝ մշակված և ընդունված լինելով 17 ազգային կազմակերպությունների կողմից: Այս փաստաթուղթը ունի մշակման ամենաբարձր աստիճանը՝ S3, որը ցույց է տալիս, որ ուղեցույցը հիմնված է և ապացուցողականության, և համաձայնության վրա: Ուղեցույցի ղեկավար խումբը կազմված է եղել 49 քվեարկող անդամներից, որոնք առաջադրվել են 17 մասնակից ազգային կազմակերպությունների կողմից: Այս փաստաթղթում ապացույցների որակը (ԱՎ) գնահատելիս կիրառվել է Օքսֆորդի Ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների դասակարգումը: Օգտագործվել են խորհուրդների ուժը բնորոշող հետևյալ աստիճանները՝ A = ուժեղ խորհուրդ (մենք խորհուրդ ենք տալիս/պետք է), B = խորհուրդ (մենք առաջարկում ենք) և O = բաց խորհուրդ (կարելի է դիտարկել): Ամփոփիչ աղյուսակներում խորհուրդների տեքստին հաջորդում են գրականական աղբյուրները իրենց ԱՎ-ով ըստ Օքսֆորդի Ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների դասակարգմանը և համապատասխան խորհուրդի աստիճանը/ուժը (ԽԱ)՝ A, B, O: Սույն ապացույցների դասակարգման մանրամասները տես՝ Հավելված 1.

Անէսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միության անդամների կողմից տեղայնացման աշխատանքները իրականացվել են ըստ ADAPTE մեթոդաբանության՝ միջմասնագիտական աշխատանքային խմբի անդամների առերես հանդիպումների և հեռահար շփումների միջոցով [2]: Ուղեցույցի բոլոր դրույթների վերաբերյալ ապահովվել է աշխատանքային խմբի անդամների կոնսենսուս: Փաստաթուղթը նախատեսված է

ինտենսիվ թերապևտների, անեսթեզիոլոգների, վիրաբույժների, օրթոպեդ-վնասվածքաբանների և առողջապահության կազմակերպիչների համար: Ուղեցույցի ծածկույթը ներգրավում է ԻԹԲ-ի բոլոր տարիքային խմբի պացիենտներին ներառյալ հղիներին և կրծքով կերակրող մայրերին անկաղ վիճակի ծանրության կամ ուղեկցող հիվանդությունների: Սույն Ուղեցույցը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման Անեսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միության անդամների կողմից յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

ԻԹԲ-ի մեծահասակ պացիենտների դելիրիումի, ցավազրկման և սեդացիայի կառավարումը

ԻԹԲ ասոցացված դելիրիումի ռիսկը և կանխարգելումը

Ցավը, սթրեսը, տագնապը, քնի և արթունության ցիկլի խանգարումները ԻԹԲ-ի պացիենտների շրջանում հաճախ հանդիպող ախտանշաններ են, որոնք բարձրացնում են ԻԹԲ ասոցացված դելիրիումի ռիսկը [3]: Դելիրիումի ախտորոշիչ նշաններն են.

- *գիտակցական մակարդակի խանգարումները (օրինակ՝ միջավայրի վերաբերյալ իրազեկության նվազում) զուգակցված ուշադրության սևեռելու կամ շարունակական պահպանելու շեղումներով*
- *կոգնիտիվ (օրինակ՝ հիշողության խնդիրներ, ապակողմնորոշում, խոսքի խանգարում) կամ զգաղողական (ցնորքներ) խանգարումներ*

Այս սկզբուրբային նշաններից զատ, դելիրիումը կարող է ուղեկցվել քնի և հոգեհուզական դաշտի զանազան խանգարումներով ինչպես նաև հոգեշարժական գրգռվածությամբ: Դելիրիումով պացիենտները կարող են լինել աժիտացված/գրգռված (**հիպերակտիվ**), քնկոտ/ արգելակված (**հիպոակտիվ**) կամ տատանվեն վերոնշյալ երկու կարգավիճակների միջև (**խառը**): ԻԹԲ-ի պացիենտների շրջանում հանդիպող դելիրիումի գերակշիռ մասը ($\geq 70\%$) լինում է հիպոակտիվ ենթատեսակի ինչը ստիպում է բուժանձնակազմին լինել գերուշադիր նրա վաղ նույնականացման հարցերում: Հիպոակտիվ դելիրիումը ԻԹԲ-ում անհամեմատ ավելի հաճախ է թերախտորոշվում: Դելիրիումը ԻԹԲ-ի պացիենտների շրջանում ուղեղի դիսֆունկցիայի ամենա տարածված դրսևորումներից մեկն է , որն ազդում է ոչ միայն վաղաժամ վերականգնման վրա՝ ԹԱՕ և ԻԹԲ-ում հոսպիտալիզացիայի

տևողության երկարացման, մահացության աճի [4, 5, 6], այլ նաև բերում է երկարաժամկետ կոգնիտիվ խանգարումների, հետվնասվածքային սթրեսային խանգարման (ՀՎՍԽ) և կյանքի որակի նվազման [7]: Այս բոլորը ՀԻԹՀ-ի մաս են կազմում, որը վերջերս նկարագրվել է ԻԹԲ-ում հոսպիտալիզացիա վերապրածների շրջանում:

Ռիսկի գործոնների կարգավորումից զատ, մի շարք արդյունավետ դեղորայքային և ոչ-դեղորայքային կանխարգելման ռազմավարություններ կարող են օգտագործվել ԻԹԲ ասոցացված դելիրիումի կանխարգելման և բուժման համար [8]: Կանխարգելիչ միջոցների արագ մեկնարկի նպատակով հարկավոր է սերտորեն գնահատել դելիրիումի ռիսկի գործոնների առկայությունը կամ զարգացումը: Ոչ-դեղորայքային միջոցները ապացուցել են իրենց արդյունավետություն մասնավորապես դելիրիումի կանխարգելման հարցում, ուստի պետք է իրականացնել ԻԹԲ-ի բոլոր ծանր պացիենտների շրջանում: Պետք է գերծ մնալ գերսեդացիայից, քանզի խորը սեդացիան հանգեցնում է կլինիկական ելքերի վատթարացմանը [9]: Դեղորայքային կանխարգելումը պլանային կարգով խորհուրդ չի տրվում և իրականացվում է միայն դելիրիումի բարձր ռիսկ ունեցող պացիենտների շրջանում:

(տես՝ Աղյուսակներ 1-3):

Աղյուսակ 1.

ԻԹԲ ասոցացված դելիրիումի ռիսկի գործոններ	ԱՎ	ԽԱ
<p>1.1</p> <p>ԻԹԲ-ում գտնվելու ընթացքում մենք խորհուրդ ենք տալիս իրականացնել հետևյալ ռիսկի գործոնների կանոնավոր գնահատում [8]՝</p> <ul style="list-style-type: none"> • ելակետային գործոններ (զուգակցող հիվանդություններ, նախկինում առկա կոգնիտիվ ֆունկցիաների նվազում [84-86], հիվանդության ծանրություն, նախկինում առկա անժարժություն), • բուժման հետ կապված գործոններ (վիրահատական միջամտություն, հակախոլիներգիկ կամ բենզոդիազեպինային դեղերի օգտագործում [34, 87-88], սեդացիայի խորություն և տևողություն, մեխանիկական օդափոխում), • հոգեբանական, սոցիալական, միջավայրային և յաթրոգեն գործոններ: 	<p>[8] 1a</p> <p>[84-86] 2b, 1b, 1b</p> <p>[34, 87-88] 1b, 2b, 1b</p>	<p>A</p>

Աղյուսակ 2.

Կանխարգելում և ռիսկի նվազեցում	ԱՎ	ԽԱ
<p>2.1</p> <p>Մենք չենք առաջարկում պլանային կարգով կիրառել դելիրիումի</p>	<p>[89-98]</p>	<p>B</p>

դեղորայքային կանխարգելում [89-98]:	2b, 2b, 2b, 2b, 2b, 1b, 1b, 1b, 1b, 1b	
2.2 Դելիրիումի բարձր ռիսկով պացիենտների շրջանում կարելի է դիտարկել ցածր դեղաչափի հալոպերիդոլի պրոֆիլակտիկ կիրառումը [99]:	[99] 2b	O
2.3 Պետք է գերծ մնալ գերսեդացիայից [23]:	[23] 1b	A
2.4 Մենք խորհուրդ ենք տալիս կիրառել ոչ-դեղորայքային կանխարգելման ռազմավարություններ ԻԹԲ-ում գտնվող բոլոր հիվանդներին [100, 21] <ul style="list-style-type: none"> • ցերեկվա ընթացքում՝ խթանող միջավայր վաղ մոբիլիզացիայով [95] և վերասկողմնոչոչմամբ (տեսողական և լսողական օժանդակման միջոցներ, շփում և ցերեկային լույս) [101]: 	[100] 1a [21] 1b [95] 1b [101] 1b [102] 2b	A A A

Աղյուսակ 3.

Երկարաժամկետ հետևանքներ	ԱՎ	ԽԱ
3.1 Պետք է սերտորեն վերահսկել հետվնասվածքյին սթրեսային խանգարման (ՀՎՍԽ) հետևյալ ռիսկի գործոնները [103]՝ դելիրիում, բենզոդիազեպինների օգտագործում, սեդացիայի տևողություն, տազնապ, հիգենիկ մեկուսացում, օրգանի փոխարինման համակարգից շարունակական կախվածություն:	[103] 1a	A
3.2 ՀՏՍԽ ռիսկի գործոններով ԻԹԲ մեծահասակ պացիենտներին պետք է խորհուրդ տրվի մասնակցել հետ-ԻԹԲ-ի շրջանում անցկացվող ստուգմանը, ինչպես նաև հոգեբանական/հոգեբուժական հսկողությանը:	5	B
3.3 Պետք է սերտորեն վերահսկել կոգնիտիվ երկարաժամկետ խանգարումների առաջացման հետևյալ ռիսկի գործոնները [104] <ul style="list-style-type: none"> • ելակետային գործոններ բժշկական պատմությունից՝ նախկինում առկա կոգնիտիվ նվազում [84-86], հայտնի գենետիկ նախատրամադրվածություն (օր.՝ ապոլիպոպրոտեին E4 [105] կամ նախկինում առկա դեպրեսիա), • բուժման հետ կապված գործոններ՝ դելիրիումի տևողություն և հաճախություն [4, 7, 106], հիպօքսիա ($PaO_2 < 60$ մմ.սս.), 	[104] 2b [84-86] 2b, 1b, 1b [105] 2b	B

<p>փոխներարկում պահանջող անեմիա, հիպոտենզիա (RR-ի ելակետայինից 30%-ով նվազում), ծանր սեպսիս / սեպտիկ շոկ, արյան մեջ գլյուկոզայի մեծ տատանումներ (<60 մգ/դլ and >180 մգ/դլ),</p> <ul style="list-style-type: none"> • հոգեբանական, սոցիալական, միջավայրային և յաթրոգեն գործոններ (քնի խանգարում / աղմուկ >80 դբ): 	<p>[4, 7, 106] 2b, 2b, 2a</p>	
--	-------------------------------	--


Ցավազրկման, սեդացիայի, դելիրիումի, տագնապի և քնի վերահսկում


ԻԹԲ-ում պացիենտ-ուղղորդված թերապիայի հիմնական սկզբունքն է պացիենտների բուժման անհատականացված նպատակների ձևակերպումը և առկա վիճակի հաճախ գնահատումը, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի արագ մեկնարկել կամ խմբագրել միջամտությունը: Բուժման նպատակների սահմանումը և վերահսկումը պետք է լինի ախտանշան-ուղղորդված, օգտագործելով վալիդացված/հաստատված սանդղակներ և գործիքներ: Այսպիսի հաստատված մեթոդների կիրառումը մեծ ազդեցություն ունի բուժման վրա. ցավի, սեդացիայի և դելիրիումի համակարգային գնահատումը կարող է զգալի լավացնել ցավի բուժումը, նվազեցնել նոզոկոմիալ ինֆեկցիաները, նվազեցնել ԹԱՕ տևողությունը և հոսպիտալիզացիան, ինչպես նաև նվազեցնել մահացությունը [10, 11]:

Ուստի, բոլոր ԻԹԲ-ների համար նպատակների սահմանումը, ցավազրկման, սեդացիայի և դելիրիումի առկա վիճակի գնահատումը և գրանցումը հաստատված կլինիկական սանդղակներով և գործիքներով՝ յուրաքանչյուր հերթափոխին մեկ անգամ (սովորաբար յուրաքանչյուր 8 ժամը) պետք է լինի ստանդարտ պրակտիկա (տես՝ Նկար 1.):

Նկար 1. (շարունակելի)


Մեծահասակ պացիենտների սեդացիայի, դելիրիումի և ցավի վերահսկման ընթացակարգ






Նկար 1. (շարունակ)

Ցավ





Հապավումներ՝

BPS (Behavioral Pain Scale)՝ ցավի գնահատման վարքագծային սանդղակ; BPS-NI (Behavioral Pain Scale, not intubated)՝ ցավի գնահատման վարքագծային սանդղակ ինքնուրույն շնչառությամբ (ոչ ինտուբացված) պացիենտների համար; CAM-ICU (Confusion Assessment Method in ICU)՝ Ինտենսիվ թերապիայի բաժանմունքում դելիրիումի և ապակողմնորոշման գնահատման մեթոդ; CPOT (Critical Care Pain Observation Tool)՝ ինտենսիվ թերապիայում ցավի գնահատման գործիք; ICDSC (Intensive Care Delirium Screening Checklist)՝ ինտենսիվ թերապիայում դելիրիումի մշտադիտարկման չեկլիստ; RASS (Richmond Sedation Agitation Scale)՝ Ռիչմոնդի սեդացիայի և աժիտացիայի սանդղակ; FPS-R (Faces Pain Scale, revised)՝ դեմքի վերանայված ցավային սանդղակ

Հաստատված սանդղակով տագնապի գնահատումը ցանկալի է, քանի որ ԻԹԲ-ի պացիենտի տագնապը հաճախ սխալ է գնահատվում և արդյունքում ոչ պատշաճ բուժվում: Կան ստանդարտ հոգեբանական չափման գործիքների կարճ տարբերակներ (State-Trait Anxiety Inventory, [STAI-s], Brief Symptom Inventory Anxiety, subscale [BSI-A]), որոնք թույլ են տալիս ճշգրիտ և վստահելի գնահատել տագնապը: Ցավի գնահատման հետազոտությունները ապացուցել են միաչափ ինքնագնահատման սանդղակների մասնավորապես գործնականում թերապևտիկ կարիքների և թերապևտիկ պատասխանի գնահատման մեջ: Տագնապի հետազոտությունները ցույց են տալիս, որ նմանատիպ սանդղակները (օր.՝ Visual Analogue Scale և Faces Anxiety Scale) նույնպես հարմար են թերապևտիկ լավ ճշտությամբ տագնապի գնահատման համար [12]: Հետագա

հետազոտություններ են հարկավոր պարզելու՝ արդյոք անքսիոլիզի կառավարումը նույնպես կարող է գնահատվել նույն սանդղակներով:

Սթրեսը և քնի ու արթունության ցիկլի խանգարումները ԻԹԲ-ի պացիենտների շրջանում հանդիպող երկու այլ համախտանիշներ են, որոնք ոչ միայն բացասաբար են ազդում վերականգնման վրա, այլ նաև հանդիսանում են լուրջ բարդությունների ռիսկի գործոններ: Այնուամենայնիվ, ներկայումս չկա սթրեսի և քնի գնահատման առկա որևէ հաստատված միջոց և միայն կենսական ցուցանիշների սուբյեկտիվ գնահատումը ԻԹԲ անձնակազմի կողմից բավարար չէ ծանր պացիենտների սթրեսի վերահսկման համար [13]: ԻԹԲ պացիենտների շրջանում քնի ու արթունության ցիկլի խանգարումների հետ կապված ոչ միայն բացակայում են վերահսկման համապատասխան միջոցները ռուտին օգտագործման համար, այլ նաև չկա քնի փուլերի հաստատված գնահատման միջոցներ [14]: Այս թեմայով խորհուրդների ամփոփումը տես՝ Աղյուսակներ 4-9:

Աղյուսակ 4.

Վերահսկում – հիմնական դրույթներ	ԱՎ	ԽԱ
4.1 Մենք խորհուրդ ենք տալիս անհատականացված ցավազրկման և սեդացիայի հիվանդ-ուղղորդված ռազմավարություններ տազնապի և դելիրիումի կանխարգելման համար: Մենք խորհուրդ ենք տալիս թերապևտիկ նպատակների անհատական սահմանում, ինչպես նաև թերապևտիկ էֆեկտների ադեկվատ վերահսկում, թե կանխամտածված, թե կողմնակի [107-109]:	[107-109] 1b 2b 2b	A
4.2 Բուժման թիրախը ինչպես նաև ցավազրկման, սեդացիայի, տազնապի և դելիրիումի առկա աստիճանը պետք է գրանցվի առնվազն մեկ անգամ յուրաքանչյուր հերթափոխին (սովորաբար յուրաքանչյուր 8 ժամը): Սա պետք է ստանդարտ լինի բոլոր ԻԹԲ-ների համար [110]:	[110] 4	A
4.3 Մենք խորհուրդ ենք տալիս կիրառել հաստատված սանդղակներ ցավազրկման, սեդացիայի, տազնապի և դելիրիումի բուժման հսկողության համար [10]:	[10] 1b	A

Աղյուսակ 5.

Ցավազրկման վերահսկում	ԱՎ	ԽԱ
4.4 Հիվանդի ցավի մակարդակը գնահատելու համար մենք խորհուրդ ենք	[10] 1b	A

տալիս օգտագործել և հաստատված ինքնագնահատման սանդղակներ և հաստատված դիտորդական սանդղակներ [30]:		
--	--	--

Աղյուսակ 6.

Սեդացիայի վերահսկում	ԱՎ	ԽԱ
4.5 Մենք խորհուրդ ենք տալիս պարզ սահմանել սեդացիայի անհատական թիրախները և հաճախակի այն ադապտացնել հիվանդի փոփոխվող կլինիկական վիճակին [22]:	[22] 1b	A
4.6 Մենք խորհուրդ ենք տալիս ԻԹԲ-ում գտնվող բոլոր պացիենտների շրջանում օգտագործել ցավազրկման և սեդացիայի ընթացակարգեր անվտանգության ստուգումներով և անհաջողության կրիտերիաներով [111]:	[111] 1b	A
4.7 Մենք խորհուրդ ենք տալիս գրանցել սեդացիայի թիրախները և սեդացիայի առկա մակարդակը նվազագույնը մեկ անգամ յուրաքանչյուր հերթափոխին (հիմնականում յուրաքանչյուր 8 ժամը) [112]:	[112] 5	A
4.8 Մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել հաստատված և վստահելի սանդղակներ (օր.՝ Richmond Agitation-Sedation Scale, RASS) [107, 113]	[107, 113] 1b	A
4.9 Ախտորոշիչ սարքերի պատշաճությունը և կարևորությունը դեռ անհայտ է: Այնուամենայնիվ, մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել նման սարքերը որպես աջակից մեթոդներ՝ խորը սեդացիայում (RASS -4/-5) կամ նյարդամկանային պաշարման վիճակում գտնվող հիվանդների շրջանում թեր- կամ գերսեդացիան ժամանակին բացահայտելու համար [114, 115, 116]:	[114] 2b [115] 3b [116] 2a	A
4.10 Մենք խորհուրդ ենք տալիս գիտակցության ցածր մակարդակով հիվանդների շրջանում ոչ-ցնցումային նոպաները բացահայտելու նպատակով կիրառել ԷԷԳ վերահսկողություն (օր.՝ դեղորայքային բուժմանը չենթարկվող հիպոակտիվ դելիրիում) (117):	[117] 2b	A

Աղյուսակ 7.

Դելիրիումի վերահսկում	ԱՎ	ԽԱ
4.11 Մենք խորհուրդ ենք տալիս դելիրիումի կանոնավոր և թիրախային սկրինինգի իրականացում դելիրիումի հաստատված և վստահելի	[4] 1b [118] 2b	A

սանդղակներով [4, 118-120] (օրիակ՝ CAM-ICU, կամ ICDSC):	[119] 2b [120] 2b	
4.12 Մենք խորհուրդ ենք տալիս գրանցել դելիրիումի սկրինինգը նվազագույնը մեկ անգամ յուրաքանչյուր հերթափոխին (հիմնականում յուրաքանչյուր 8 ժամը) (82, 112):	[82] 1a [121] 1b	A

Աղյուսակ 8.

Տազնապի վերահսկում	ԱՎ	ԽԱ
4.13 Մենք առաջարկում ենք ԻԹԲ-ում գտնվող մեծահասակ հիվանդների շրջանում կիրառել տազնապի գնահատման հաստատված սանդղակ [122]:	[122] 1b	B

Աղյուսակ 9.

Քնի վերահսկում	ԱՎ	ԽԱ
4.14 ԻԹԲ-ում գտնվող հիվանդների շրջանում կարող է անցկացվել քնի փուլերի վերահսկում [123]:	[123] 2b	O

Բուժման սկզբունքներ

Գծագիր 2.

Ոչ-դեղորայքային սկզբունքներ

Աղյուսակ 10.

Ոչ-դեղորայքային սկզբունքներ	ԱՎ	ԽԱ
5.a.1 Ցավի և տազնապի նվազեցման համար պետք է դիտարկել հետևյալ ոչ-դեղորայքային մոտցեումները՝ <ul style="list-style-type: none"> • մկանային աղբյուրների օգտագործում՝ վաղ շարժունություն [91, 92, 95], շնչառական թերապիա [124], ֆիզիկական և աշխատանքային թերապիա, նյարդի միջմաշկային էլեկտրական խթանում, պասիվ կինեզիոթերապիա, ձեռքով մերսումներ [125] • կոգնիտիվ խթանում (օր.՝ երաժշտաթերապիա) [122]: 	[91] 2b [92] 2b [95] 1b [124] 3b [125] 3b [122] 1b	B
Դելիրիումի կանխարգելման համար պետք է դիտարկել հետևյալ ոչ-դեղորայքային մոտցեումները՝	[91] 2b	B

<ul style="list-style-type: none"> մկանային աղբյուրների օգտագործում՝ վաղ շարժունություն, ֆիզիկական և աշխատանքային թերապիա [91, 92, 95], կոգնիտիվ խթանում՝ ներառյալ ժամանակային վերակողմնորոշման ընթացակարգերը [101], արտաքին միջավայրի բարելավում աղմուկի նվազեցում [126] / լույսի կարգավորում և սոցիալ մեկուսացումից խուսափում [127]: 	[92] 2b [95] 1b [101] 2b [126] 1b [127] 1b	
---	--	--

Ցավագրկում

ԻԹԲ պացիենտները կարիք ունեն ցավի անհատականացված վարման: Ցավը ունի զգալի բացասական ազդեցություն վերականգնման վրա և ԻԹԲ պացիենտների շրջանում գրանցվող ամենահաճախ սթրես գործոններից մեկն է: Ուստի, պետք է ապահովել համապատասխան ցավագրկում բոլոր ԻԹԲ պացիենտներին՝ անկախ սեդացիայի ցուցումներից և պոտենցիալ ցավոտ բոլոր միջամտությունները պետք է իրականացնել կանխարգելիչ ցավագրկման պայամներում: ԻԹԲ-ում ցավագրկումը հիմնականում հիմնված է ափիոնային դեղորայքի վրա [15, 16, 17, 18], քանի որ ոչ-ափիոնային ցավագրկողների ռիսկ/օգտակարություն հարաբերությունը դեռ մնում է գիտական քննարկման թեմա (ցածր ցավագրկող պոտենցիալ, բայց նշանակալի կողմնակի ազդեցություններ):

Կարող է կիրառվել համակցում ռեգիոնալ ցավագրկման հետ, և այն պահից, երբ պացիենտը բավարար արթուն է (RASS 0/-1 և դելիրիումի բացակայություն) խորհուրդ է տրվում անցում կատարել պացիենտի կողմից կարգավորվող ցավագրկման մոդելին [20]:

Աղյուսակ 11.

Ցավագրկում	ԱՎ	ԽԱ
5.b.1 Մենք խորհուրդ ենք տալիս, որ ԻԹԲ-ում գտնվող հիվանդները ստանան անհատական հարմարեցված ցավագրկում իրենց վճակին համապատասխան [128]:	[128] 1b	A
5.b.2 Մենք խորհուրդ ենք տալիս ԻԹԲ-ում օգտագործել ափիոնային ցավագրկողներ [15-18]:	[15] 3b [16] 1b [17] 1b [18] 2b	B
5.b.3 Ըստ ցավի մակարդակի և պոտենցիալ կողմնակի ազդեցությունների, ոչ-ափիոնային և/կամ այլ խմբերին պատկանող ցավագրկողները կարելի է	[129] 1a	O

դիտարկել որպես այլընտրանքային կամ հավելյալ դեղորայք [129]:		
5.b.4 Կախված պացիենտի վիճակից կարող է դիտարկվել պացիենտի կողմից կարգավորվող ցավազրկման կիրառումը (RASS 0/-1, դելիրիումի բացակայություն) [20]:	[20] 1a	O
5.b.5 Եթե պացիենտը հիվանդը արթուն է և կարող է համագործակցել, ավանդական ցավազրկման մոդելներին պետք է նախընտրել պացիենտի կողմից կարգավորվող ցավազրկումը, որը բերում է ցավի կարգավորման բարելավման և հիվանդի բավարարվածության [20]:	[20] 1a	B
5.b.6 Պետք է դիտարկել ռեգիոնալ ցավազրկման համակցման հնարավորությունը [19]: Ռեգիոնալ կաթետրի տեղադրումը և թերապիայի մեկնարկումը պետք է սկսել վիրահատությունից առաջ՝ որքան հնարավոր է շուտ:	[19] 1a	B
5.b.7 Պոտենցիալ ցավոտ միջամտությունները պետք է կատարել միայն ադեկվատ ցավազրկման պայմաններում:	5	A
Ռեգիոնալ ցավազրկում	ԱՎ	ԽԱ
6.1 Մինչ ռեգիոնալ ցավազրկման իրականացումը, պետք է կատարել անհատական ռիսկ-օգուտ գնահատում և վերագնահատել ամեն օր:	5	B
6.2 Ցուցմանը և ռիսկ-օգուտ գնահատմանը համաձայն մենք խորհուրդ ենք տալիս կիրառել տեղային ցավազրկողներով էպիդուրալ կաթետրներ, քանի որ այս մոտեցումը բարելավում է պերիօպերատիվ ցավազրկման արդյունքները [130, 131], նավզեցնում է թոքային բարդությունները, խթանում է աղիների պերիստալտիկան, ինչպես նաև կրճատում է ԻԹԲ-ում մնալու տևողության [132], համեմատած ներերակային ափիոնային թերապիայի:	[130] 1a [131] 1b [132] 1a	A
6.3 Մենք խորհուրդ ենք տալիս կիրառել էպիդուրալ կաթետրային ցավազրկում կամ տեղային ցավազրկողներով կամ ափիոնային ցավազրկողների հետ համակցմամբ, քանի որ սա ավելի արդյունավետ է ցավի բուժման համար, քան միայն էպիդուրալ կաթետրային ցավազրկումը [133]:	[133] 1a	B
6.4 Նեյրոաքսիալ ռեգիոնալ ցավազրկման միջամտությունները պետք է լինեն	[110] 5	B

ատրավմատիկ: Եթե դա հնարավոր չէ իրականացնել, միջամտությունը պետք է կասեցնել և սերտորեն հսկել պացիենտին հավանական բարդությունների վաղ ախտորոշման և բուժման նպատակով [110]:		
6.5 Նյարդաբանական բարդությունների վաղ բացահայտման նպատակով մենք խորհուրդ ենք տալիս ապահովել RASS O/-1-ի համարժեք սեղացիայի մակարդակ կաթետերի տեղադրման ժամանակ, հաջորդիվ 24 ժամերի ընթացքում 8 ժամ տևողությամբ, ապա՝ օրը մեկ անգամ	[110] 5	A
6.6 Հակամակարդիչ թերապիա ընդունող պացիենտներին, ում կատարվում է նեյրոաքսիալ ցավազրկում, մենք խորհուրդ ենք տալիս սերտորեն հետևել հակաթրոմբային դեղորայքի ընդունման միջակայքերին վերաբերող Գերմանիայի անզգայացման և ինտենսիվ թերապիայի միության ուղեցույցերին [134, 135]:	[134-135] 5	A
6.7 Ցավի օպտիմիզացված թերապիայի և բարդությունների վաղ հայտնաբերման համար մենք խորհուրդ ենք տալիս օրական կլինիկական հետազոտությունների (կաթետերի տեղաշարժման, արնահոսության, ինֆեկցիայի նշանների և վիրակապի փոփոխման վերահսկում), որակի ապահովման և ըստ անհրաժեշտության դեղաչափի շտկման իրականացում [136, 137]:	[136-137] 2a	A
6.8 Եթե բարդություններ են ենթադրվում, մենք խորհուրդ ենք տալիս անհապաղ սկսել ախտորոշիչ և բուժական միջոցառումներ: Եթե պացիենտ կախյալ կամ կազմակերպչական խնդիրներից ելնելով դա հնարավոր չէ, մենք խորհուրդ ենք տալիս չկիրառել կաթետերը:	5	A
6.9 Հիվանդների անվտանգությունը բարելավելու և որոշում կայացնելու պրոցեսը հեշտացման համար մենք առաջարկում ենք ԻԹԲ-ում ռեգիոնալ ցավազրկման կիրառման տեղային ընթացակարգերի ստեղծում [138]:	[138] 4	B

Սեղացիա

Առկա ապացույցները ցույց են տալիս, որ պետք է միշտ զերծ մնալ սեղացիայից, եթե չկա պարտադիր կլինիկական ցուցում [21, 22]: Խորը սեղացիան, ինչպես նաև առաջին 48 ժամվա ընթացքում ասոցացված է բարձր մահացության, երկար ԹԱՕ, երկար ԻԹԲ-ում մնալու և հոսպիտալիզացիայի հետ [23, 24, 25, 26]: Հատուկ ցուցումներից զատ (օր.՝ վիրահատական ցուցումներ, բարձր ներգանգային ճնշման նշաններ սպառնացող ուղեղի ճողվածքով կամ սպառնացող հիպօքսիա), բուժման թիրախը պետք է լինի գիտակից,

համագործակցող հիվանդը, ով կարող է դիմակայել պահանջվող միջամտություններին (RASS 0/-1): Հիմնարար է ադեկվատ ցավազրկման հասնելը, որն ուղեկցվում է հավանական ավտանշանների բուժմամբ, ինչպիսին են ցնորքները, սթրեսը և տագնապը [27, 28, 29]: Վերջին համակարգային վերանայումը բացահայտել է սեդացիայի օրական ընդմիջումների (UOL) նվազ կարևորություն, որն այլևս չի դիտարկվում սեդացիայի ընթացակարգային վարումից ավելի վեր [30]: Թեթև սեդացիայի նպատակը պետք է սահմանել որքան հնարավոր է վաղ, քանի որ առաջին 48 ժամվա ընթացքում կիրառվող սեդացիան կանխատեսում է երկարատև ելքը: Պետք է հետևել սեդացիայի «վաղ թիրախ-ուղղորդված/նպատակային թերապիա» սկզբունքին RASS 0/-1 թիրախով:

Աղյուսակ 12.

Սեդացիա	ԱԱ	ԽԱ
5.c.1 Մենք խորհուրդ ենք տալիս RASS-ի 0/-1 թիրախ ԻԹԲ-ում գտնվող բոլոր պացիենտների համար [21, 22]:	[21] 1b [22] 1b	A
5.c.2 Մենք խորհուրդ ենք տալիս, որ սեդացիան պահվի միայն հատուկ վիճակներով / ցուցումներով հիվանդների համար (օր.՝ բարձր ներգանգային ճնշում) [22, 21], և ոչ թե օգտագործվի համընդհանուր:	[22] 1b [21] 1b	A
5.c.3 Սեդատիվ դեղորայքի ընտրության հարցում մենք խորհուրդ ենք տալիս դիտարկել հետևյալ ասպեկտները՝ <ul style="list-style-type: none"> • սպեցիֆիկ ցուցումներ և սեդացիայի անհատական թիրախ, • ֆարմակոկինետիկա և ֆարմակոդինամիկա: 	5	A
5.c.4 Մենք խորհուրդ ենք տալիս ԻԹԲ-ում գտնվող պացիենտների սեդացիայի համար կառավարելի ազդեցությամբ սեդատիվ դեղորայքի գերադասելի օգտագործում [139-146]:	[139] 2b [140-144] 1b [145] 2b [146] 1a	A

Չափավոր կամ խորը սեդացիա

Եթե տրված է խորը սեդացիայի ցուցում, հարակվոր է սահմանել RASS-ի թիրախայի արժեքը և ընթացիկ վերազնահատման ժամանակը: Սեդացիան պետք է կատարել հիպնոտիկ և ցավազրկող դեղորայքի համակցումով, որտեղ հիպնոտիկ դեղորայքի ընտրությունը պետք է կատարել համապատասխան ցանկալի սեդացիայի մակարդակի և կառավարելիության:

Պրոպոֆոլից և բենզոդիազեպիններից զատ, ինհալացիոն անեսթետիկները նույնպես հնարավոր տարբերակներ են: Հակացուցումների բացակայության դեպքում, RASS \leq -2 սեդացիայի խորությամբ պացիենտների շրջանում հարկավոր է կիրառել սեդացիայի ընդհատումներ (Spontaneous Awakening Trial, SAT) և ինքնուրույն շնչառության անցնելու փորձեր (Spontaneous Breathing Trials, SBT) [31]:

Աղյուսակ 13.

Չափավոր/խորը սեդացիա (թիրախային RASS՝ \leq-2)	ԱԱ	ԽԱ
5.d.1 ԹԱՕ մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել պրոպոֆոլ (չպիտակավորված օգտագործում (off-label-use)՝ > 7 օր օգտագործում և/կամ 16-ից ցածր տարիք; դեղաչափի սահմանափակում՝ \leq 4մգ/կգ/ժ) [147]:	[147] 1a	A
5.d.2 Ինհալացիոն անեսթետիկների կիրառումը կարող է դիտարկվել մեխանիկական օդափոխման դեպքում, եթե կարճատև արթնացման ցանկություն կա [148-154]:	[148] 2b [149-154] 1b	O
5.d.3 Միդազոլամը կարող է դիտարկվել RASS \leq -2 թիրախով սեդացիայի համար՝ սեդացիայի խորության ադեկվատ հսկողության ներքո [155]:	[155] 1a	O
5.d.4 Միայն RASS \leq -2-ով հիվանդների համար մենք խորհուրդ ենք տալիս կիրառել ամենօրյա ինքնուրույն արթնացման փորձ (SAT) և ինքնուրույն շնչառության փորձ (SBT), եթե որևէ հակացուցում չկա:	[30] 1a [31] 1b	A

Ախտանշան-ուղղորդված սեդատիվ թերապիա

Ցավից զատ, ԻԹԲ-ի պացիենտների ամենահաճախ ախտանշաններն են՝ սթրեսը, տագնապը, աժիտացիան, հոգեկան ախտանշանները և քնի խանգարումները, որոնք բոլորն էլ պահանջում են թիրախային, ախտանշան-ուղղորդված թերապիա: Ոչ-դեղորայքային ռազմավարության և պատճառային բուժմանն ի հավելում, վերոնշյալ ախտանշանների կառավարման համար կարող է անհրաժեշտ լինել դեղորայքային բուժում: Ալֆա-2-ազոնիստները կարող են օգտագործվել սթրեսի նվազեցման համար, իսկ բենզոդիազեպինները՝ անքսիոլիզի:

Աղյուսակ 14.

Ախտանշան-ուղղորդված սեդատիվ թերապիա (թիրախային RASS՝ 0/-1)	ԱԱ	ԽԱ
5.e.1 ԻԹԲ-ում գտնվող մեծահասակների սթրեսի և վեգետատիվ ախտանշանների բուժման համար մենք առաջարկում ենք տալիս կիրառել	[156] 2b [157] 1b	B

ալֆա-2-ագոնիստներ [156-158]:	[158] 1b	
5.e.2 Տագնապի և աժիտացիայի բուժման համար մենք առաջարկում ենք բենզոդիազեպինների բոլոր սային կիրառում (տիտրեցված ըստ RASS 0/-1 թիրախի) [146]:	[146] 1a	B
5.e.3 Հոգեկան ախտանիշների (դելիրիումից անկախ) բուժման համար մենք առաջարկում ենք օգտագործել նեյրոլեպտիկներ [33]:	[33] 1a	A
5.e.4 ԻԹԲ-ում գտնվող բոլոր պացիենտների համար մենք առաջարկում ենք ապահովել ֆիզիոլոգիական ցերեկ և գիշեր ուղիղ: Առկա են դեղորայքային [81] և ոչ դեղորայքային (օր.՝ արտաքին միջավայրի բարելավում, ինչպիսիք են լույսի և աղմուկի սահմանափակում, գիշերային ժամերին միջամտությունների մինիմալացում [126]) տարբերակներ:	[81] 1b [159] 3b [126] 1b	B

Դելիրիումի դեղորայքային բուժում

Դելիրիումի կանխարգելիչ միջոցառումները և անվտանգ են և արդյունավետ [32]: Դելիրիումը պետք է բուժել անհապաղ և ախտանշանային: Հոգեկան ախտանշանների բուժումը (դելիրիումի հետ կամ առանց) կարող է ներառել ցածր դեղաչափի նեյրոլեպտիկներ [33]: Ավելին, ալֆա-2-ագոնիստները նույնպես հարմար են դելիրիումի ախտանշան-ուղղորդված բուժման շրջանակներում [34, 35]: ԻԹԲ-ում հանդիպող հատուկ դեպքերից է **ալկոհոլի հանման** դելիրիումը, որի համար պետք է դիտարկել երկարատև ազդեցության բենզոդիազեպինների ներմուծումները [36]:

Աղյուսակ 15.

Դելիրիումի բուժում	ԱՎ	ԽԱ
5.f.1 Մենք խորհուրդ ենք տալիս դելիրիումի ախտանշանային բուժման անհապաղ մեկնարկում (160):	[160] 1b	A
5.f.2 Դելիրիումի ախտանիշների բուժման համար կարելի է դիտարկել ցածր դեղաչափի հալոպերիդոլ, ռիսպերիդոն, օլանզապին և քվետիպին [33]:	[33] 1a	O
5.f.3 Երկարատև սեդացիայի կասեցումից հետո հանման համախտանիշից զերծ մնալու համար մենք խորհուրդ ենք տալիս դեղերի աստիճանաբար նվազեցում, ինչպես նաև աղյուվանտ դեղորայքի օգտագործում (օր.՝ ալֆա-2-ագոնիստներ) [161]:	[161] 1b	B

5.f.4 Դելիրիումի բուժման համար մենք խորհուրդ ենք տալիս ալֆա-2-ազոնիստների շարունակական օգտագործում [34, 35]:	[34] 1b [35] 1b	A
---	--------------------	---

Անջատում ԹԱՕ-ից

Ցավազրկման, սեդացիայի և դելիրիումի վարումը զգալիորեն ազդում է ԹԱՕ-ից անջատման պրոցեսի վրա [37, 38]: Որպեսզի սկսել անջատումը որքան հնարավոր է շուտ, օգտակար է համատեղել սեդացիայի և անջատման ընթացակարգերը:

Աղյուսակ 16.

ԹԱՕ-ից անջատում	ԱԱ	ԽԱ
5.g.1 Մենք խորհուրդ ենք տալիս սկսել անջատումը որքան հնարավոր է շուտ, օդափոխման հետ կապված բարդություններից զերծ մնալու, հիվանդանոցում մնալու տևողության նվազման և ելքը բարելավելու համար [162, 21]:	[162] 1b [21] 1b	A
5.g.2 Մենք խորհուրդ ենք տալիս համակցել անջատման և սեդացիայի ընթացակարգերը (այս ուղեցույցին համապատասխան) [21, 162]:	[21] 1b 162] 1b	A

Բուժում նյարդամկանային պաշարման դեղորայքով (ՆՄՊԴ)

ԻԹԲ-ում նյարդամկանային պաշարման ընդհանուր/համատարած կիրառման որևէ ցուցում չկա: Նյարդամկանային պաշարման ընթացքում պացիենտը չի կարող արթուն լինել, մասնակցել վերականգման պրոցեսին, ինչպես նաև հոգեթերապիային: Երբ առկա է ՆՄՊԴ հատուկ ցուցում, պետք է կատարել ադեկվատ ցավազրկում և սեդացիա [39]: Հետագայում պետք է վերահսկել պաշարման խորությունը [40], և տևողությունը պետք է պահել որքան հնարավոր է կարճ:

Աղյուսակ 17.

Բուժում նյարդամկանային պաշարման դեղորայքով	ԱԱ	ԽԱ
7.1 Մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել ՆՄՊԴ-երը ԻԹԲ-ում միայն հատուկ ցուցումների դեպքում:	5	A
7.2 Մենք խորհուրդ ենք տալիս նյարդամկանային պաշարման դեղորայքի	[39] 5	A

կիրառման դեպքում ապահովել ադեկվատ ցավագրկում և սեդացիա [39]:		
7.3 Եթե պահանջվում է սեդացիա և ՆՄՊԴ օգտագործում, մենք խորհուրդ ենք տալիս սեդացիայի և նյարդամկանային պաշարման խորության սերտորեն վերահսկողություն [40]:	[40] 2b	A

Ներ- և միջհիվանդանոցային տեղափոխում

Հատկապես ներ- և միջհիվանդանոցային տեղափոխումների ժամանակ պացիենտի շարժումը և դիրքի փոփոխությունը պոտենցիալ ցավոտ վիճակներ են: Ուստի, ախտանշանային բուժումը պետք է շարունակել և հնարավոր է նաև շտկել տեղափոխման ժամանակ [41]: Ոչ ադեկվատ սեդացիայից (զեր- և թերսեդացիան) բոլոր դեպքերում պետք է զերց մնալ, քանի որ դա կարող է բերել սիրտանոթային և նյարդաբանական ցուցանիշների սուր խանգարման:

Աղյուսակ 18.

Ներ- և միջհիվանդանոցային տեղափոխում	ԱԱ	ԽԱ
8.1 Ներ- և միջհիվանդանոցային տեղափոխման ժամանակ մենք առաջարկում ենք, որպեսզի առկա լինեն և պահանջի դեպքում օգտագործվեն ցավագրկողներ և սեդատիվներ [41, 163-164]:	[163 + 164] 5 [41] 2b	B

Ցավագրկման, սեդացիայի և դելիրիումի վարումը հատուկ դեպքերում

Հղիները և կրծքով կերակրող կանայք ԻԹԲ-ում

Հղիների և կրծքով կերակրող պացիենտների դեղորայքային թերապիան ԻԹԲ-ում հատկապես դժվար է, քանի որ պետք է հաշվի առնել դեղորայքի ազդեցությունը պտղի կամ կրծքով կերակրվող երեխայի վրա: ՊԲՎՓ դեպք-ստուգիչ հետազոտությունների բացակայության պատճառով, առկա են քիչ ապացույցներ հղիների և կրծքով կերակրող կանանց դեղորայքային թերապիայի վերաբերյալ: Եթե ափիոնային դեղորայքի կամ սեդացիայի ցուցում լինի, այս ընթացքում երեխայի ադեկվատ վերահսկումը պարտադիր է:

Աղյուսակ 19.

Հղիները և կրծքով կերակրող կանայք ԻԹԲ-ում	ԱԱ	ԽԱ
B1.1 Մենք խորհուրդ ենք տալիս հաշվի առնել հղիների / կերակրող կանանց շրջանում սուր ցավի դեղորայքային բուժման հավանական ազդեցությունը պտղի / երեխայի վրա:	5	A

<p>B1.2 Հետծննդյան շրջանում ԻԹԲ-ում լինելու ժամանակ արգանդի ատոնիան կանխարգելելու համար մենք խորհուրդ ենք տալիս զերծ մնալ արգանդի վրա կողմնակի ռելաքսանտ ազդեցություն ցուցաբերող դեղորայքից, ծննդաբերությունից հետո նվազագույնը 7 օր [165]:</p>	[165] 1a	A
<p>B1.3 Անհրաժեշտության դեպքում, հղիության բոլոր փուլերում կարել է դիտարկել ափիոնային ցավազրկողների կիրառումը (երեխայի ադեկվատ վերահսկողությամբ) [166-168]:</p>	[166] 1b [167] 4 [168] 4	O
<p>B1.4 Մինչ 27+0 շաբաթական հղիությունը, ԻԹԲ-ում գտնվող պացիենտների համար դիկլոֆենակը կարելի է դիտարկել որպես ՈՍՀԲԴ առաջին ընտրություն [169, 170]:</p> <p>Հղիության ընթացքում, ԻԹԲ-ում գտնվող հիվանդների համար պարացետամոլը կարելի է դիտարկել որպես 1-ին ընտրության ցավազրկող դեղորայք [171-176]:</p> <p>Մինչ 28+0 հղիությունը ասպիրինը կարելի է դիտարկել որպես երկրորդ ընտրություն:</p>	[169] 2b [170] 3b [171-176] 4	O
<p>B1.5 Մենք առաջարկում ենք հղիության ընթացքում կիրառել սեդատիվներ միայն խիստ ցուցումներով:</p>	5	B
<p>B1.6 Անկախ առկա վիճակից մենք խորհուրդ ենք տալիս վերահսկել կրծքի կաթը՝ երեխային հնարավոր ռիսկի տակ դնող դեղորայքի կուտակման համար:</p>	5	A
<p>B1.7 Կրծքով կերակրման ժամանակ երբեմն ցուցված են լինում ափիոնային ցավազրկողները: Ֆենտանիլը և մորֆինը կարող են դիտարկվել որպես առաջին ընտրություն: Ապնոեյի հակում ունեցող երեխաների շրջանում ափիոնային ցավազրկողները պետք է զգուշորեն դիտարկել [177-180]:</p>	[177-180] 2b, 3b	O
<p>B1.8 Կրծքով կերակրման ժամանակ մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել պարացետամոլ կամ իբուպրոֆեն որպես ցավազրկողների առաջին ընտրություն, իսկ դիկլոֆենակը որպես երկրորդ ընտրություն:</p>	5	B

Կյանքի ավարտի խնամք

Վերահաս անխուսափելի մահը շրջան է, որը սերտորեն կապված է տագնապի, սթրեսի և ցավի զգացումների հետ: Մահացող պացիենտները կարիք ունեն նույն հիվանդ-ուղղորդված խնամքի, ինչպես ԻԹԲ մյուս պացիենտները: Նրանց հարկավոր է ապահովել հաճախակի վերահսկմամբ և բավարար դեղորայքային թերապիայով՝ վստահ լինելով, որ չունեն անհարմարություն, եթե անգամ սա բերելու է մահվան պրոցեսի արագացմանը:

Աղյուսակ 20.

Կյանքի ավարտի խնամք	ԱԱ	ԽԱ
B2.1 Մահացող պացիենտները պահանջում են նույն պացիենտ-ուղղորդված բժշկական և բուժքույրական բուժում, ինչպես ԻԹԲ-ում գտնվող այլ պացիենտները: Մենք խորհուրդ ենք տալիս մահացող պացիենտների շարունակական վերահսկողություն և ադեկվատ դեղորայքային բուժում՝ ապահովելով հիվանդների համար անհանգստությունից զերծ վիճակ:	5	A
B2.2 Ցավի և տագնապի նվազեցման համար, ըստ պահանջի, մահացող հիվանդները պետք է ստանան ցավազրկողներ և անքսիոլիտիկներ, անգամ եթե սա կբերի մահացման պրոցեսի արագացման [181, 182]:	[181] 2b [182] 2a	A
B2.3 Մենք խորհուրդ ենք տալիս զերծ մնալ մահացող պացիենտների շրջանում ՆՄՊԴ-ի օգտագործումից, քանի որ դրանք խանգարում են ախտանիշների կլինիկական գնահատմանը:	5	A

Ծանր այրվածքներով պացիենտներ

Ծանր այրվածքային վնասումները բերում են ուժեղ ցավի, հավանական է հիպերալգեզիան, ինչպես նաև երկարացված հոսպիտալիզացիայի: Ադեկվատ բազային մակարդակի ցավազրկումից զատ, տարբեր միջամտություններ կատարելիս (օր.՝ վիրակապի փոխում) հավելյալ ցավազրկողների (տեղային և համակարգային) և/կամ միջամտական սեդացիայի կարիք կարող է լինել: Ցավազրկող, աղյուվանտ դեղորայքի և ոչ-դեղորայքային ռազմավարության կիրառման մուլտիմոդալ սկզբունքներ կան կապված ծանր այրվածքային վնասումներով պացիենտների ցավի վարման հետ [45]: Հատկապես այրվածքներով երեխաների շրջանում ցավազրկման և սեդացիայի համար պետք է կիրառվի ստանդարտիզացված ընթացակարգեր և ուսուցողական դասընթացներ [46]: Աղյուսակներ 21-22

Աղյուսակ 21.

Ծանր այրվածքներով մեծահասակ պացիենտներ	ԱԱ	ԽԱ
B3.1		

Ծանր այրվածքներով պացիենտների ցավազրկման, աղյուվանտների և ոչ-դեղորայքային ռազմավարությունների համար մենք առաջարկում ենք օգտագործել բազմամոդալ մոտեցում:	[45] 2a	B
B3.2 Ցավազրկման համար մենք խորհուրդ չենք տալիս լիդոկայինի շարունակական ներերակային օգտագործումը [183]:	[183] 1a[183] 1a	A
B3.3 Այրվածքներով մեծահասակների շրջանում ավիոնային ցավազրկողներին որպես աղյուվանտ կարելի է դիտարկել համացավազրկողների կիրառումը, ինչպիսին է գաբապենտինը [184]:	[184] 3b	O
B3.4 Այրվածքներով պացիենտների երկրորդային հիպերալգեզիան և ավիոնային պահանջը նվազեցնելու համար մենք առաջարկում ենք օգտագործել կետամին [185, 186] :	[188] 1a	B
B3.5 Սեդացիայի համար մենք առաջարկում ենք օգտագործել ալֆա-2-ազոնիստներ, քանի որ նրանք ցույց են տվել ավելի մեծ արդյունավետություն այրվածքներով հիվանդների շրջանում, քան այլ դեղորայքը (օրձ բենզոդիազեպիններ) [188]:	[189] 1b	B
B3.6 Վիրակապի փոփոխման ժամանակ կարելի է դիտարկել լիդոկայինի տեղային կիրառումը, քանի որ այն մեղմացնում է ցավը միջամտության ժամանակ:	[190] 1a	O
B3.7 Ցավի և տագնապի դեղորայքային թերապիային ի հավելում, մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել վիրտուալ իրականությունը որպես ոչ-դեղորայքային միջամտություն [190]:	[190] 1a	B

Աղյուսակ 22.

Այրվածքներով երեխաներ	ԱԱ	ԽԱ
B3a.1 Այրվածքներով երեխաների վիրակապի փոփոխման ժամանակ ցավազրկման և սեդացիայի համար մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել ստանդարտիզացված ընթացակարգեր և ուսուցողական ծրագրեր [46]:	[46] 5	A
B3a.2 Միջամտական ցավի համար մենք խորհուրդ ենք տալիս առավելապես օգտագործել կետամին, այլ ոչ թե ավիոնային ցավազրկողներ:	[191] 2b	B

<p>B3a.3 Ոչ-դեղորայքային միջամտությունների (ոչ այրված հատվածների մերսում, հիպնոզ, վիրտուալ իրականություն) և ափիոնային ցավազրկողների համակցումը ավելի արդյունավետ է, քան միայն ափիոնային ցավազրկողների կիրառումը: Ուստի, այրվածքներով երեխաների շրջանում մենք առաջարկում ենք օգտագործել ափիոնային ցավազրկողների և ոչ-դեղորայքային միջամտությունների համակցում [192, 193, 194]:</p>	<p>[192] 1b [193] 1b [194] 1b</p>	<p>B</p>
<p>B3a.4 Այրվածքներով երեխաների վիրակապի փոփոխման ժամանակ սեղացիայի համար կարելի է դիտարկել դեքսամեդետոմիդինի կիրառումը [195]:</p>	<p>[195] 1b</p>	<p>O</p>

Բազմաթիվ վնասվածքներով պացիենտներ

